

## Երաժշտագիտ Նիկողայոս Տիգրանեանի

(ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՅԻՄՆԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆԻ ԱՌԹԻՒ)


Նիկողայոս Տիգրանեանը ծնուել է 1856 օդոստոսի 19ին Ալեքսանդրապոլում։ Խել տարեկան հասակում ծաղկախոր խլում է նրա աչքերի լոյսը։

Տիգրանեանների նահապետական տան անդամներից յայտնի թառիստ Մելիք-Աղամալեան յատկապէս մեծ ազգեցութիւն է գործում մանուկ Նիկողայոսի մէջ զարգացնելու երաժշտական բնածին ընդունակութիւնը։

1873 թուին, պատանի Նիկողայոսը իր ծընողքի ընկերակցութեամբ մեկնում է Վիեննա, ուր նա տեղաւորում է կոյրերի կայսերական ինստիտուտը, միաժամանակ դասեր է վերցնում Կոնսերվատորիայի պրոֆէսօր Շեններից։

1880 թուին երիտասարդ Նիկողայոսն ելաժշտական բարձրագոյն կրթութիւն ստանալով, վերադառնում է հայրենիք, որտեղ սկսում է տաղանդաւոր երիտասարդի երաժշտական լորձունչութեան բեղմնաւոր շրջանը։

Եւրոպական կլասիկ երաժշտագէտների երկերը նուազելիս, Նիկողայոսը ձգտում է եւրոպական արուեստի մեթոսով մշակել արեւելեան կլասիկ երաժշտութեան մեծարժէք և ըմոյները, ձգտելով պահպանել արեւելեան երաժշտութեան հարազատութիւնը, յաճակ ներագել տալով այդ երկնը ծերունի Մելիք Աղամալեանին այդպէսով բաղդ է ունենում ծա-



Նիկողայոս Տիգրանեան

նօթանալ արեւելեան երաժշտութեան հարաբութեանը, (պարսկական, քրդական, վրացական, հայկական մօտիւներին)։

Պեթհովընի «Clair de Lune» սոնաթի, Շոփէնի Fantaisie impromptuի աղջեցութեան տակ, Նիկողայոս Տիգրանեանը զբում է երկու սքանչելի երկեր, առաջինը՝ Քիւրդ - պայարի, Երկրորդը՝ Զարկեահ, որոնք իրենց բովանդակութեան խորութեամբ եւ ոճի հարազատութեամբ, կիրառուած պոլիֆոնիկ կոնտրապունկտային մեթոդով, (մեր հայ Երաժիշտների մէջ՝ արեւելեան եղանակները բազմաձայն դարձնելու միջոցը, պոլիֆոնիկ կոնտրապունկտային ձեւերը եւ ոճը գործածելը առաջին անգամ Նիկողայոս Տիգրանեանը ցոյց է տուել) կարելի է առել իր կլասիկ գլուխ գործոցներն են:

Տիգրանեանի ստեղծագործութիւնը, որպակէ արեւելեան Երաժշտագէտի, շատ խոշոր նշանակութիւն ունի, եւ կը գտնէ իր արժանի տեղը արեւելեան Երաժշտութեան պատմութեան մէջ:

Նրա շնորհիւ այժմ հնարաւորութիւնը շունինք ծանօթանալու արեւելեան կլասիկ երաժշտութեան նմուշներին, որոնցից շատերը նա վրկել է կորսուից եւ ազաւազումից, միաժամանակ տալով նրանց կուլտուրական երաժշտութեան արտաքին ձեւը՝ առանց խախտելու այդ եղանակների ներքին ոճը եւ արեւելեան հարազատութիւնը: Իրօք որ սա այնպիսի խրչոր երախտաքի է որք միայն բաւական է անո՞ւ հացնելու Նիկողայոս Տիգրանեանի անունը:

Անհրաժեշտ է յատկապէս ընդգծել այն խոշոր դերը, որ կատարել է Ն. Տիգրանեանը արեւելեան եւ հայ ժողովրդական երաժշտութեան գարզացման ասպարէզում: Նրա ստեղծագործութիւնները հիմք են ծառայել մի շարք Երաժիշտների համար արեւելեան եւ հայ կական երաժշտութիւնը մշակելու գործում: Այս տևակէտից ուշադրաւ է Ա. Սպենդիարեանի այն յօդուածը որ տպուած է Լենինգրատում (ուսւերէն լեզուով): Հրատարակուան «Գիւմրիցու» գրքում, որի մէջ մէծանուն երաժշտագէտը շեշտում է Ն. Տիգրանեանի դերը իր

երաժշտական կեանքում: Աւելորդ չենք համարում մէջ բերել մի քանի քաղուածներ Սովետարեանի այդ յօդուածից:

«1898 թուականին Ռիմսկի Կորսաքովի աշակերտած ժամանակ, Պետելրոպուլ կում ծանօթացայ Նիկողայոս Տիգրանեանի հետ: Նոյն թուականին Պետելրոպուրկում Նիկողայոս Տիգրանեանի համերգը իր զուտ արեւելեան րէբէսթուարի կատարուածով, խոր տպաւորութիւն գործեց իմ վրայ, նրա մասնաւորագէն հայկական պարերը իրենց ինքնայտուկ բիթմով եւ մելուտիայով խիստ մեծ հետաքրքրութիւն շարժեցին իմ մէջ: Այն օրից երբ իմ ստեղծագործական ուղղութիւնը վերջնականապէս պարզուեց եւ իմ ստեղծագործութիւնը ձուլվէ ի Արեւելքի հետ, Նիկողայոս Տիգրանեանը լէ ձգարձաւ առանձնապէս սիրելի եւ մօտիկ: Կսուսումնասիրեցի Ն. Տիգրանեանի ստեղծութուածները, որոնց մէջ բնազդօրէն զգում էի ինձ հետաքրքրութիւնը (արեւելեան) Երաժշտութեան ամենէն հարազատ արտայայտութիւնը: 1916 թուին երբ մտածեցի զրել Ալմաստ օպէրան (ըստ Յ. Թումանեանի պօէմի), ես սկսեցի նիւթեր հաւաքել: Հայկական եւ պարսկական երաժշտութիւնից ինձ համար անհրաժեշտ ժողովածուների շարքում ձեռք բերի Նիկողայոս Տիգրանեանի երկերը: այդ հսկայական աշխատանքի մէջ, փայլուն կերպով աչքի են զարնում Ն. Տիգրանեանի ձայնազդութիւնները, որոնց մէջ բնազդօրէն զգում էի ինձ հետաքրքրութիւնը (արեւելեան) Երաժշտութեան ամենէն հարազատ արտայայտութիւնը: 1916 թուին երբ մտածեցի զրել Ալմաստ օպէրան (ըստ Յ. Թումանեանի պօէմի), ես սկսեցի նիւթեր հաւաքել: Հայկական եւ պարսկական երաժշտութիւնից ինձ համար անհրաժեշտ ժողովածուների շարքում ձեռք բերի Նիկողայոս Տիգրանեանի երկերը: այդ հսկայական աշխատանքի մէջ, փայլուն կերպով աչքի են զարնում Ն. Տիգրանեանի ձայնազդութիւնները, որոնց հիման վրայ կերտեցի մի քանի օպէրայական օռէկսթրի էպիգուդներ, օրինակ՝ պարսկական մարչի համար օգտագործեցի Հեյտարիի մեծ մասը, եւ հատուածներ Նեվրուշ - Արապիից: Ալմաստի մեծ պարիս համար նույնին օգտագործեցի Քենարազ, Վարդ Վշիկ եւ Շավալին պարերի եղանակները: Երկողայոս Տիգրանեանի առաւելութիւնը այն է որ նա գեղարուեստական նուրբ ճաշակով ընտրում է այդ եղանակները, ճշգորէն ըմբոն եւ քրոլոր առանձնայտկութիւնները»:

Ն. Տիգրանեանը 1930 թուին Լենինկրա-

տում պրոֆէսոր Զերնովի հետ «օրկեսարու՛կայի» վերածեց իր «Բայարի ֆիլդ»ը և մի շաբք արեւելան պարերը, նաեւ լարային «Աւարտէտ»ի համար զրեց դաշնամուրի համար զրուած «Բայարի Շիրազ», - և մի քանի պարեր : Նա իր 76 տարեկան ծերունազարդ հուսում շարունակում է իր աշխատանքները : Եա ունի մի քանի տասնեակ ստեղծագործութէներ և ներ և մշակումներ, որոնց մեծ մասը դաշնամուրի համար են զրուած . ունի նաեւ «վոքալ» երկերի մի շարք, նոյնպէս՝ ջութակի համար (դաշնամուրի ընկերակցութեամբ) մի շարք երկեր, որոնց մէջ պէտք է յիշել «Շահնազ» ու «Զուրնի տրնգի» :

Նիկողայոս Տիգրանեանի յիսնամեայ երաժշտական գործունէութիւնը բարձր գնահաւ ելով, խորհրդային Հայաստանի Լուսժողկու-

տի նախաձեռնութեամբ, խորհրդային Հայաստանի և Անդրկովկասի հասարակութիւնը համագիտաւոր կերպով դարնան սկիզբը տօնելու է տաղանդաւոր և ծերունազարդ երաժշտութեամբ յորելեանը(1) :

### ԱԴԱՒՅԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ

Երեւան, 11-3-33

(1) Այս յօդուածը մեզի դրկած է Օր. Աղասի Մեսրոպեան, պոլսեցի տաղանձաւոր դաշնակահարուհի մը որ տարիներ առաջ Երեւանի գացած՝ մեր մայրաքաղաքահին երաժշտական փայլուն ուժերէն մին է դարձած :

Ծ. Խ.